ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/32 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ եղանակով էլեկտրական ամենագնաց ավտոմեքենայի գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի
Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 12.03.2024թ. ժամը 10:00-ին

Մասնակցում են՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արմեն Սարգսյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամներ՝ Արմեն Անտաշյան /գնահատող/
Արա Ավետիսյան /գնահատող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Թաշչյան /քարտուղար/

1. **Տեղեկատվություն «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/32» գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր չկնքելու հիմքերի մասին**

1.1 Գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրության 6-րդ կետի համաձայն «ԳԷՍ ԷՅԷՄ» ՍՊ ընկերությունը համարվել էր ընտրված՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից: Անգործության ժամկետի ավարտից հետո օրենսդրությամբ սահմանված կարգով ընտրված մասնակցին 29.02.2024թ e-auctions համակարգի միջոցով ներկայացվել էր պայմանագրի նախագիծը և պայմանագիր կնքելու առաջարկը՝ առաջարկելով Ծանուցումը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագիրը e-auctions համակարգի միջոցով, իսկ պայմանագրի և որակավորման ապահովումները, ուղեկցական գրությամբ, ներկայացնել «ԵՊՀ» հիմնադրամի գնումների վարչություն: «ԳԷՍ ԷՅԷՄ» ՍՊ ընկերության կողմից 2024 թվականի մարտի 6-ին Պատվիրատուի հրավերում նշված էլեկտրոնային հասցեին ներկայացվել է պայմանագրից հրաժարվելու գրություն, իսկ 2024 թվականի մարտի 7-ին «ԳԷՍ ԷՅԷՄ» ՍՊ ընկերության կողմից e-auctions համակարգում չի կցվել իր կողմից էլ. ստորագրությունով հաստատված պայմանագիրը և չի ներկայացվել պայմանագրի և որակավորման ապահովումները:

2. **Տեղեկատվություն գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին**

2.1 Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով սույն հրավերի 8.21-րդ կետը, որոշեց «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

3. **Տեղեկատվություն մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգի մասին**

3.1 Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությունը և նույն հոդվածի 2-րդ մասը, որոշեց մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով դիմել պատվիրատուի ղեկավարին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Ա. Սարգսյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ա. Անտաշյան

_____ Ա. Ավետիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ա. Թաշչյան